



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ  
ՈՐՈՇՈՒՄ № 10Լ**

**ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի  
ԹԻՎ 16Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, ՀՀ Նախագահի 23.02.2017թ. թիվ ՆՀ-267-Ա և 28.02.2017թ. թիվ ՆՀ-270-Ա հրամանագրերը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

**ՈՐՈՇՈՒՄ Է**

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին ատյանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) Հավելվածի 7-րդ աղյուսակի 5-րդ կետի «Դատավոր» սյունակից հանել «Մարդանյան Կարեն Հենրիկի» բառերը,

բ) Հավելվածի 13-րդ աղյուսակի 13-րդ կետի «Դատավոր» սյունակից հանել «Մարտիրոսյան Միշա Սկրտչի» բառերը,

գ) Հավելվածի 14-րդ աղյուսակի 9-րդ կետի «Դատավոր» սյունակից հանել «Հովակիմյան Նարինե Ռադիկի» բառերը,

դ) Հավելվածի 17-րդ աղյուսակի 6-րդ կետի «Դատավոր» սյունակից հանել «Մնացականյան Անդրանիկ Մնացականի» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի մարտի 02-ից:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

2017թ. մարտի 01  
ք. Երևան